# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ԲԵՄԱԿԱՆՔ

• Եր. 1 Մարտ. — Ըստ սովորութեան, յետ երեկոյեան ժամերգութեան, կատարուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի գլխաւոր խորաններուն և սրբանկարներուն վարագուրումը, Գեր. Տեղապահ Ս. Հօր նախագահութեամբ։

• Կիր. 2 Մարտ. — Բուն բարեկենդան. Մեծ պահոց փակման խորանի Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Պատարագեց Հոգ. Տ. Օշական Արք. Մինասեան։

• Դշ. 5 Մարտ. — Սկիզբն կարգաց Մեծի պահոց. Առաւօտեան հանդիսաւոր «Մեղայ»ն արտասանեց Գեր. Տ. Սուրէն Ս. Եպս. Քէմհաճեան, Մեծ Պահոց ընթացքին, ամէն Չորեքշաբթի և Ուրբաթ պիտի կատարուին Արևագալի հանդիսաւոր ժամերգութիւն, իսկ Երեքշաբթի և Հինգշաբթի «Եկեսցէ», որոնց ընթացքին կարգաւ պիտի քարոզեն Ս. Աթոռոյս Ս. Եպիսկոպոսները ու վարդապետ հայրերը։

• Ուր. 7 Մարտ. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատօնակը պաշտուեցան Մայրավանքի Ս. Թորոս եկեղեցւոյն մէջ, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Ս. Եպս. Քէմհաճեանի։

• Շբ. 8 Մարտ. — Ս. Թէոդորոսի զօրավարին. Առաւօտեան ժամերգութիւնն ու Ս. Պատարագը մատուցուեցան ի Ս. Թէոդորոս։ Պատարագեց Հոգ. Տ. Կիւրեղ Արք. Գաբրիէլեան։

— Կ. Վ. ժամը 2.30ին, Միաբանութիւնը, Գեր. Տեղապահ Ս. Հօր գլխաւորութեամբ մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, որու մուտքին կազմուեցաւ «Հրաշափառ»ի թափօրը։ Ս. Գերեզմանի ուխտէն յետոյ, Բ. Գողգոթայի մեր վերնայարկ մատրան մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին հանդիսաւոր նախատօնակը։

• Կիր. 9 Մարտ. — Արտաքսման Կիրակի. — Առաւօտեան ժամը 6ին, գլխաւորութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեանի, Միաբանութիւնը մուտք գործեց Ս. Յարութեան Տաճարը։ Գողգոթայի ուխտէն յետոյ, Բ. Գողգոթայի մեր վերնատան մէջ կատարուեցաւ առաւօտեան ժամերգութիւնը։ Ժամը 8ին, իր շքախումբով Տաճարէն ներս մուտք գործեց Գեր. Տեղապահ Ս. Հայրը։ Ս. Պատարագը մատոյց Հոգ. Տ. Վարուժան Արք. Գասպարաճեան։ Այս տեղի ունեցաւ օրուան մեծահանդէս թափօրը Քրիստոսի Ս. Գերեզմանին շուրջ, գլխաւորութեամբ Գեր. Տեղապահ Ս. Հօր, մասնակցութեամբ սրբազան եպիսկոպոսաց, հոգեշնորհ վարդապետաց, բարեշնորհ սարկաւագաց և համայն ուսանողութեան, ի ներկայութեան խուռներամ բազմութեան։ Թափօրը Ս. Գերեզմանին շուրջ երիցս դառնալէ յետոյ՝ անցաւ Պատանատեղի, ուր տեղի ունեցաւ Աւետարանի ընթերցում, որը կրկնուեցաւ նաև Ս. Գերեզմանի առջև ու երգուեցաւ «Տէր ողորմեա»ն։ Այս թափօրը անգամ մը ևս բոլորուելով Ս. Գերեզմանին շուրջ, վերջացաւ մեր վերնամատրան մէջ, Գեր. Տեղապահ Ս. Հօր «պահպանիչ»ով և օրհնութեամբ։ Արարողութեանց աւարտին՝ Միաբանութիւն և ժողովուրդ հանդիսաւոր գնացքով վերադարձան Մայրավանք։

• Կիր. 16 Մարտ. — Անառակի Կիրակի. Ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ. Պատարագեց Հոգ. Տ. Միւռոն Վրդ. Կրճիկեան։ Քարոզեց Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեան, մեկնաբանելով անառակի աւետարանական առակը։

• Կիր. 23 Մարտ. — Տնտեսի Կիրակի. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ։ Պատարագեց Հոգ. Տ. Անուշաւան Արք. Ջղջանեան։ Քարոզեց Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեան, իրեն նիւթ ունենալով անիրաւ տնտեսի աւետարանական առակը։

• Շբ. 29 Մարտ. — Կ. Վ. ժամը 2.30-ին, Միաբանութիւնը, Գեր. Տեղապահ Ս. Հօր գլխաւորութեամբ իջաւ Ս. Յարութեան Տաճար, որու մուտքին կազմուեցաւ «Հրաշափառ»ի զգեստաւորեալ թափօրը որ յառաջացաւ դէպի Փրկչին Ս. Գերեզմանը, որու ուխտէն յետոյ, թափօրը իջաւ Գիւտ Խաչի այրը, հոն ևս կրկնուելէ յետոյ ուխտի արարողութիւնը, Հայապատկան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին հանդիսաւոր նախատօնակը։

• Կիր. 30 Մարտ. — Դատաւորի Կիրակի. — Առաւօտեան ժամը 5ին, գլխաւորութեամբ Գեր. Տ. Սուրէն Ս. Եպս.ի, Միաբանութիւնը իջաւ Ս. Յարութեան Տաճարը։ Գողգոթայի ուխտէն յետոյ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ պաշտուեցաւ առաւօտեան ժամերգութիւնը։ Ժամը 8ին, Գեր. Տեղապահ Ս. Հօր գլխաւորութեամբ՝ երկրորդ թափօր մը իջաւ Ս. Յարութիւն։ Հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի լուսափայլ Գերեզմանին վրայ մատոյց Գեր. Տեղապահ Ս. Հայրը։ Յաւարտ Ս. Պատարագի՝ կազմուեցաւ օրուան մեծահանդէս թափօրը, գլխաւորութեամբ Գեր. Տեղապահ Ս. Հօր և մասնակցութեամբ բովանդակ Միաբանութեան ու աշակերտութեան։ Թափօրը, երիցս շրջան ընելէ ետք Ս. Գերեզմանին շուրջ, անցաւ Պատանատեղի, ուր կատարուեցաւ Ս. Աւետարանի ընթերցում. այս թափօրը վերադարձաւ դէպի Ս. Գերեզման և հոն ևս կատարուեցաւ Ս. Աւետարանի ընթերցում ու երգուեցաւ «Տէր ողորմեա»ն։ Հուսկ յետոյ, Գերեզմանին շուրջանակի գնացքով, թափօրը իջաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, ուր Գեր. Տեղապահ Ս. Հօր օրհնութեամբ փակուեցաւ այսօրուան հոգեպարար ու սրտագրաւ արարողութիւնը։ Գրեթէ կէսօրին՝ Միաբանութիւն և ժողովուրդ շքերթով վերադարձան Մայրավանք։

• Ուր. 4 Ապրիլ. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատօնակը պաշտուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Ս. Եպս. Քէմհաճեանի։

• Շբ. 5 Ապրիլ. — Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին. (Մուտն ի վիրապն). Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Գր. Լուսաւորչի խորանին վրայ։ Պատարագեց Հոգ. Տ. Վարուժան Արք. Գասպարաճեան։

— Կ. Վ. ժամը 2-ին, Միաբանութենէն մաս մը, գլխաւորութեամբ Գեր. Տ. Նորայր Ս. Եպս. Պողարեանի, բարձրացաւ Համբարձման սարը։ Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին հանդիսաւոր նախատօնակը կատարուեցան Համ-

digitised by A.R.A.R.@

բարձման սրբատեղւոյն մէջ՝ Իրիկնամուտին կատարուեցան «Ննջեցէք», «Հսկումն» և առաւօտեան ժամերգութիւն, որմէ յետոյ հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Հոգ. Տ. Կիւրեղ Արք. Գաբիկեան։

● Կիր. 6 Ապրիլ. — Դալսեան Կիրակի. Առաւօտեան ժամը 7.30ին, վարդապետ հայրեր, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Ս. Եպս. Քէմհաճեանի, բարձրացան Համբարձման սարը։ Սրբավայրին մուտքը եղաւ «Հրաշափառ»ի թափօրով, որմէ յետոյ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ։ Եպիսկոպոսական խոյր ի գլուխ պատարագեց և քարոզեց Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան։ Յետ Ս. Պատարագի, Միաբանութիւն և ժողովուրդ շքերթով վերադարձան Մայրավանք։

● Եր. 12 Ապրիլ. — Յիշատակ յարութեան Ղազարու. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ։ Պատարագեց Հոգ. Տ. Կիւրեղ Արք. Գաբիկեան։ Ս. Պատարագի ընթացքին հաղորդուեցան Ս. Թարգմանչաց Վարժարանի վեց հարիւր աշակերտները, ինչպէս նաև օտար վարժարաններու հարիւրի մօտ Հայ աշակերտներ։

●

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● Կիր. 9 Մարտ. — Կ. Վ. ժամը 3ին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի, ներկայ գտնուեցաւ Լատինաց Պատրիարքարանի գոհաբանական մաղթանքին և ընդունելութեան, Պիոս ԺԲ. Պապի պսակալութեան տարեդարձին առթիւ։

● Կիր. 16 Մարտ. — Կ. Ա. ժամը 11ին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի և Տիար Կարապետ Հինդլեանի, քաղաքապետարան երթալով շնորհաւորեց Նոր քաղաքապետ Օմար Էֆ. Էլ-Ուաարին։

— Կ. Վ. ժամը 3ին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Գեր. Տ. Սուրէն Ս. Եպս. Քէմհաճեանի, Հոգ. Տ. Տ. Սերովբէ և Հայկազուն վարդապետներու, վանական գործերով մեկնեցաւ Իսրայէլ և վերադարձաւ 25 Մարտ. Երեքշաբթի Կ. Վ. ժամը 3ին։

● Եր. 22 Մարտ. — Կ. Վ. ժամը 3ին, ի դիմաց Գեր. Տեղապահ Ս. Հօր, Գեր. Տ. Նորայր Ս. Եպս. Պողարեան, ընկերակցութեամբ Տիար Կ. Հինդլեանի, ներկայ գտնուեցաւ Յոյն-Հռովմէականներու տարեկան պազարին, իրենց Հովուատունին մէջ։

● Դշ. 26 Մարտ. — Կ. Ա. ժամը 11.30-ին, Երուսաղէմի Նորընտիր քաղաքապետ Օմար Էֆ. Էլ-Ուաարի, ընկերակցութեամբ իր օգնականին, իր առաջին այցելութիւնը տուաւ Գեր. Տեղապահ Ս. Հօր, և ընդունուեցաւ Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ։

● Ուր. 4 Ապրիլ. — Ս. Զատկի տօնակատարութեան առթիւ յատկապէս հրաւիրուած ըլլալով Ամեն. Տ. Գարեգին Ս. Պատրիարքէն, Կ. Վ. ժամը 4ին, Հոգ. Տ. Միւռոն Վրդ. Կրճիկեան, Գալանտիայի օդակայանէն մեկնեցաւ Կ. Պոլիս։

## ԳԵՐ. Տ. ՍԵՐՈՎԲԷ ՎՐԴ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
### ՆՈՒԻՐԱԿ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Երուսաղէմի քաղաքական դրութեան հետեւանքով ստեղծուած Ս. Աթոռիս տնտեսական կացութիւնը ոչ մէկ ձևով ցարդ կարելի եղաւ դարմանել։ Գեր. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեանի Հիւս. Ամերիկայէն հաւաքած նիւթական միջոցները սպառած են գրեթէ։ Այս անել կացութեան առջև Ս. Աթոռիս Գեր. Տեղապահ Սրբազանը և Պատ. Տնօրէն Ժողովը որոշում տուին Գեր. Տ. Սերովբէ Վրդ.ը ղրկել որպէս Նուիրակ Ս. Աթոռոյ դէպի Հարաւային Ամերիկա։

Ըստ այդ, Գեր. Հայրսուրբը Մարտ 31 Երկուշաբթի յ. մ. ժամը 3ին, Ս. Գլխադրի մէջ կատարելէ ետք իր հրաժեշտի ուխտը, ճամբայ ելաւ։ Ողջերթի համար մինչև օդակայան իրեն կ'ընկերանային հոգ. վարդապետներ, բարեկամներ, ուսուցչական կազմն ու աշակերտութիւնը Ս. Թարգմանչաց Վարժարանին, որուն երկար տարիներու սիրուած ու յարգուած տեսուչն էր եղած Գեր. Հայրսուրբը։

Հայր Սերովբէ այս առթիւ պիտի հանդիպի նաև Բարիզ, տեղւոյն եկեղեցական վարչութեան հրաւէրով կարգադրելու համար տեղւոյն թեմական գործերը։

⁂

Վերջին պահուն, Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետէն Գեր. Տեղապահ Ս. Հօր ուղղուած հեռագրէ մը կ'իմանանք թէ՝ Վեհ. Հայրապետի բարձր հաճութեամբ, մեր Միաբանութեան լայն համակրանքը վայելող Գեր. Տ. Սերովբէ Հայրսուրբը նշանակուած է որպէս կաթողիկոսական Պատուիրակ Ուրուգուայի թեմին։

Կը մաղթենք եկեղեցանուէր և Աթոռասէր ճիգերու յաջողութիւն և արդիւնաւորութիւն։

●

## ՀՈԳ. Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎՐԴ. ՄՈՒՇԵԱՆ
### ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍԻ

Հարաւային Ամերիկայի նախկին կաթողիկոսական պատուիրակ Գեր. Տ. Գարեգին Սրբազանի (ներկայ Ամեն. Ս. Պատրիարքը Կ. Պոլսոյ) հաճութեամբ, Ս. Աթոռոյս երիտասարդ վարդապետներէն Հոգ. Տ. Յարութիւն Վրդ. Մուշեան նշանակուած էր որպէս Հոգևոր Հովիւ Պուէնոս Այրէսի։

Կարգ մը անցագրային դժուարութիւններ յետաձգեցին Հոգ. Հօր ճամբորդութիւնը, և սակայն ի վերջոյ հարթուած ըլլալով այդ դժուարութիւնները, Երեքշաբթի, 8 Ապրիլ 1952, յ. մ. ժամը 3ին, Հոգ. Հայրսուրբը ճամբայ ելաւ դէպի իր նոր պաշտօնատեղին։ Ողջերթի համար մինչև օդակայան իրեն ընկերացան վարդապետ հայրեր և բարեկամներ։

Կը մաղթենք յաջողութիւն և արդիւնաւոր գործունէութիւն մեր սիրելի և Հոգեշնորհ միաբան եղբօր։

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Hagop Vartanian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

digitised by A.R.A.R.@